

**ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏ Բ-Ի ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ԿԼԻՆԻԿԱՆ,
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԸՆԹԱՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

HBV ընթանում է սուր կամ քրոնիկ, իսկ դրա դրսևորումները կարող են արտահայտվել ախտանշանների բացակայությունից կամ հիվանդության թեթև ձևերից մինչև ծանր կամ հազվադեպ հանդիպող ֆուլմինանտ հեպատիտը:

Սուր հեպատիտ B-ն սովորաբար ընթանում է, որպես ինքնաբուժվող հիվանդություն և բնորոշվում է հեպատոցիտների սուր բորբոքումով և նեկրոզով: Մահացությունը սուր հեպատիտ B-ի ժամանակ 0,5–1% է: Տևողությունը՝ 6 շաբաթից մինչև 6 ամիս:

Հիմնական ախտանիշներն են՝

- տենդ
- ախորժակի բացակայություն
- սրտխառնոց, փսխում
- ցավ կամ ծանրության զգացում որովայնում (աջ թուլակողի շրջան)
- մաշկի և տեսանելի լորձաթաղանթների դեղնություն
- մեզի գույնի մզացում, կղանքի բաց գունավորում/ախուլիկ կղանք/
- հողամկանային ցավեր
- ցան

Քրոնիկ հեպատիտ B-ն ընդգրկում է հիվանդությունների ամբողջ սպեկտր և բնորոշվում է որպես պերսիստվող HBV-վարակ (արյան կամ շիճուկի մեջ հեպատիտ B-ի վիրուսի մակերեսային հակաձնի (HBsAg) որոշվող քանակների առկայություն 6 ամսից ավելի), որը կարող է ուղեկցվել կամ չուղեկցվել վիրուսի ակտիվ ռեպլիկացիայով, լյարդի բջիջների վնասման և բորբոքման նշաններով: Քրոնիկ HBV վարակը դինամիկ պրոցես է, որն արտացոլում է HBV ռեպլիկացայի և տիրոջ իմունային պատասխանի միջև փոխազդեցությունը, և HBV վարակով ոչ բոլոր պացիենտներն ունեն քրոնիկ B հեպատիտ: Քրոնիկ HBV վարակի բնական ընթացքը

սխեմատիկորեն բաժանվել է հինգ փուլերի՝ հաշվի առնելով HBeAg-ի, HBV ԴՆԹ-ի մակարդակները, ալանինամինոտրբանսֆերազի (ALT) արժեքները և լյարդի բորբոքման առկայությունը կամ բացակայությունը: Քրոնիկ HBV վարակի փուլերը պարտադիր չէ, որ լինեն հաջորդական: Նոր դասակարգիչը (նոմենկլատուրան) հիմնված է քրոնիկացման երկու հիմնական բնութագրերի նկարագրության վրա. **վարակ** կամ **հեպատիտ**:

Քրոնիկական HBV-վարակի բնական ընթացքը հիմնված HBV և լյարդի հիվանդության ցուցիչների վրա (EASL 2017)

Քրոնիկական HBV-վարակի բնական ընթացքը և պացիենտների զնահատում

HBV-ի մարկերներ
HBsAg
HBeAg/anti-HBe
HBV ԴՆԹ

Լյարդի հիվանդության
Կենսաքիմիական ցուցանիշ՝ ALT
Ֆիբրոզի մարկեր ոչ ինվազիվ
(Լյաստոգրաֆիա կամ բիոմարկերներ) կամ բիոպսիա

	HBeAg-դրական		HBeAg-բացասական	
	քրոնիկ վարակ	քրոնիկ հեպատիտ	քրոնիկ վարակ	քրոնիկ հեպատիտ
HBsAg	Բարձր	Բարձր/միջին	Ցածր	Միջին
HBeAg	Դրական	Դրական	Բացասական	Բացասական
HBV ԴՆԹ	>10 ⁷ ՄՄ/մլ	10 ⁴ -10 ⁷ ՄՄ/մլ	<2,000 ՄՄ/մլ	>2,000 ՄՄ/մլ
ALT	Նորմալ	Բարձր	Նորմալ	Բարձր
Լյարդի հիվանդության	Բացակայում է / մինիմալ	Միջին ծանրության / ծանր	Բացակայում է	Միջին ծանրության / ծանր
Հին անվանում	Իմուն-տոլերանտ	Իմուն ռեակտիվ HBeAg դրական	Ինակտիվ կրության	HBeAg բացասական քրոնիկ հեպատիտ

1-ին փուլ .HBeAg-դրական քրոնիկ HBV վարակ
 (նախկինում «իմունային տոլերանտության» փուլ)
 Շիճուկում՝

- HBeAg-ի առկայություն
- HBV ԴՆԹ-ի շատ բարձր մակարդակ
- ԱՆՏ-ի մշտապես նորմալ մակարդակ
- Լյարդում բացակայում է կամ առկա է նվազագույն նեկրոբորբոքում կամ ֆիբրոզ

Ելքը՝

- Կարցինոգենեզ (հեպատոցիտների HBV ԴՆԹ-ի ինտեգրման և կլոնային էքսպանսիայի բարձր մակարդակով պայմանավորված)
- HBeAg-ի սպոնտան էլիմինացիա (այս փուլում չափազանց ցածր է)

Թե՛ HBe-դրական, թե՛ HBe-բացասական քրոնիկ HBV վարակը որևէ կլինիկական դրսևորում չունի:

(Այս փուլում վիրուսը հայտնաբերվում է պատահական կամ սկրինինգային հետազոտությունների արդյունքում:)

2-րդ փուլ. HBeAg-դրական քրոնիկ B հեպատիտ

(նախկինում «իմունային ռեակտիվ» փուլ)

Այս փուլը կարող է զարգանալ առաջին փուլից մի քանի տարի հետո, ազվելի հաճախ առաջանում է չափահաս տարիքում վարակված անձանց մոտ:

Շիճուկում՝

- HBeAg-ի առկայություն
- HBV ԴՆԹ-ի շատ բարձր մակարդակ
- ԱՆՏ-ի բարձր մակարդակ
- Լյարդում առկա է չափավոր կամ ծանր նեկրոբորբոքում և ֆիբրոզի արագացված առաջընթաց

Ելքը՝

- HBeAg-ի սերոկոնվերսիա, HBV ԴՆԹ-ի ճնշում և անցում HBeAg-բացասական վարակի փուլ

- HBV-ն չի վերահսկվում և անցնում է HBeAg-բացասական քրոնիկ հեպատիտ B փուլ մի քանի տարի տևողությամբ

3-րդ փուլ. HBeAg-բացասական քրոնիկ HBV վարակ

(նախկինում «ինակտիվ կրության» փուլ)

Շիճուկում`

- HBeAb (հակա-HBe)-ի առկայություն
- HBV ԴՆԹ-ի չորոշվող կամ ցածր մակարդակ(< 2000 ՄՄ/մլ)
- ԱԼՏ-ի նորմալ մակարդակ
- Լյարդում բացակայում է կամ առկա է նվազագույն լյարդային նեկրոբորբոքման ակտիվություն և ցածր ֆիբրոզ

Ելքը`

- HBeAg-բացասական քրոնիկ հեպատիտ B-ի առաջացում
- այս պացիենտների մոտ ցիռոզի կամ ՀՅԿ-ի զարգացման ռիսկը ցածր է, եթե նրանք մնան այս փուլում
- HBsAg կորուստ և/կամ սերոկոնվերսիա (կարող են առաջանալ սպոնտան տարեկան 1-3% դեպքերում)

4-րդ փուլ. HBeAg-բացասական քրոնիկ B հեպատիտ

(նախկինում «HBeAg-բացասական քրոնիկ հեպատիտ» փուլ)

Շիճուկում`

- HBeAg-ի բացակայություն, հակա-HBe-ի հայտնաբերում
- HBV ԴՆԹ-ի մշտական կամ տատանվող, չափավոր կամ բարձր մակարդակ
- ԱԼՏ-ի տատանվող կամ կայուն բարձր մակարդակ
- Լյարդի հյուսվածաբանությունը ցույց է տալիս նեկրոբորբոքում և ֆիբրոզ

5-րդ փուլ. HBsAg-բացասական փուլ,

«օկուլտ HBV վարակ»

Շիճուկում`

- HBsAg-ը բացասական,

- HBcAg նկատմամբ (հակա-HBc) դրական հակամարմիններ,
- Հակա-HBs-հակամարմիններ առկա են կամ բացակայում են,
- ԱԼՏ-ի նորմալ մակարդակ,
- սովորաբար, բայց ոչ միշտ, չորոշվող HBV ԴՆԹ (կարող է հաճախ հայտնաբերվել լյարդում)
- իմունոսուպրեսիան կարող է բերել հեպատիտ B վիրուսի ռեակտիվացիայի :

Քրոնիկ HBe-դրական և HBe-բացասական հեպատիտով պացիենտները կարող են ունենալ սուր հեպատիտին բնորոշ կլինիկական նշաններ՝

- Ախորժակի անկում
- Հոգնածություն
- Անոռեսիա
- Սրտխառնոց
- Սուբֆերիլ ջերմություն
- Աջ թուլակողում դիսկոմֆորտի կամ թույլ ցավի զգացում և այլն

Հիվանդության պրոգրեսիվման դեպքում՝

- լյարդային էնցեֆալոպաթիա
- քնի խանգարում
- կոմա
- ասցիտ
- ստամոքսաղիքային արյունահոսություն
- կոագուլոպաթիա և այլն

ԱՐՏԱԼՅԱՐԴԱՅԻՆ ԴՐՄԵՈՐՈՒՄՆԵՐ

Կարող են առաջատար դեր ունենալ հիվանդության կլինիկական ընթացքում և վիրուսային հեպատիտի ուշ ախտորոշման պատճառ հանդիսանալ:

Զարգացման պաթոգենետիկ օղակում կարևոր դեր ունի իմուն-միջնորդավորված ֆենոմենը՝ պայմանավորված շրջանառող իմուն կոմպլեքսների նստեցումով արտալյարդային հյուսվածքի վրա:

Մաշկային՝	Աուտոիմուն՝
<ul style="list-style-type: none"> • Շենլեյն Հենոխի ծիրանեցան • Մանկական պապուլյար ակրոդերմատիտ • Վիտիլիգո, եղնջացան • Խոցանեկրոտիկ վասկուլիտ 	<ul style="list-style-type: none"> • Հանգուցավոր պոլիարտերիտ • Հակաֆոսֆոլիպիդային համախտանիշ • Ռեյնոյի համախտանիշ, Տակայասուի հիվանդություն • Միոկարդիտ, պերիկարդիտ
Էնդոկրին՝	Նյարդամկանային և հոդային՝
<ul style="list-style-type: none"> • Աուտոիմուն թիրեոիդիտ • Շաքարային դիաբետ 	<ul style="list-style-type: none"> • Պոլիմիոզիտ, միալգիաներ • Արթրիտներ, արթրալգիաներ, ՌՍ • Գիեն Բարեի համախտանիշ • Պոլինեյրոպաթիա
Էկզոկրին՝	Երիկամային՝
<ul style="list-style-type: none"> • Շեգրենի համախտանիշ 	<ul style="list-style-type: none"> • Գլոմերուլոնեֆրիտ • Ինտերստիցիալ նեֆրիտ
Արյունաբանական՝	Թոքային
<ul style="list-style-type: none"> • Աուտոիմուն հեմոլիտիկ անեմիա • Սուր և քրոնիկ լեյկոզներ • Լիմֆոմա, լիմֆոսարկոմա • Խառը կրիոգլոբուլինեմիա 	<ul style="list-style-type: none"> • Ֆիբրոզացնող ալվեոլիտ • Թոքային գրանուլեմատոզ • Թոքային վասկուլիտ, պլերիտ